Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 95 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԱՐԵՎԱՅԻՆ ՋՐԱՏԱՔԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ

1.	Ծրագրի նպատակը	Արցախում բազմազավակ, պատերազմից տուժած, սոցիալապես անապահով ընտանիքներին արևային ջրատաքացուցիչների անհատույց տրամադրում
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Լորիկ» մարդասիրական հիմնադրամ, Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Վարշավյան փողոց 26, ՀՎՀՀ՝ 00233374)
4.	Ծրագիրը կատարողը	«Լորիկ» մարդասիրական հիմնադրամ, Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Վարշավյան փողոց 26, ՀՎՀՀ՝ 00233374)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Արցախի Հանրապետություն, Մարտունու շրջան բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	35,000,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի 75 ընտանիքներ, որոնց ընտրությունը կատարվում է կազմակերպության կողմից, ուսումնասիրությունների արդյունքում
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2023 թվականի փետրվարի 1-ից մինչև 2023 թվականի հուլիսի 1-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Ծրագրի 1-ին փուլում ձեռք է բերվելու 5 հատ արևային ջրատաքացուցիչ՝ 2 070 000 դրամի չափով, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի փետրվարի 1-ից մինչև 2023 թվականի հունիս 1-ն ընկած ժամանակահատվածում:

		2. Ծրագրի 2-րդ փուլում ձեռք է բերվելու 70 հատ արևային ջրատաքացուցիչ՝ 32,930,000 դրամի չափով, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի մարտ 1-ից մինչև 2023 թվականի հոկտեմբեր 1-ն ընկած ժամանակահատվածում: Արևային ջրատաքացուցիչները ունենալու են հինգ տարվա սպասարկման և թերությունների վերացման երաշիք և անխափան աշխատելու համար ունենալու են թերությունների վերացման եռօրյա արձագանքման պայմանագիր:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. 5 հատ արևային ջրատաքացուցիչի ձեռքբերում և տեղադրում՝ 2 070 000 ՀՀ դրամ, 2. 70 հատ արևային ջրատաքացուցչի ձեռքբերում և տեղադրում՝ 32,930,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցություն չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ: Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ԱՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից՝ հաշվետվության տեսքով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

09.02.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ